№ 20 ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 17 **1896** ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 17 № 20

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ենինա Ներսէսեան Աբամակլիսեան իր զաւակների հետ, աւագ քահանայ Տէր-Ներսէս Տէր-Բարսեղեանց, Նինա Գաբրիէլեան Մեղվինեանց և Յովհաննէս Յակոբեան Քամոյեանց՝ յայտնում են խորին ցաւով, առաջինն իր ամուսնու, երկրորդները իրանց հօր, երրորդը իր փեսայի, չորրորդը եղբօր և վերջինը մօրեղբօր՝

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԱԲԱՄԱԿԼԻՍԵԱՆԻ

մահը: Հանգուցեալի յուղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, փետրվարի 18-ին, իր սեփական անից, Միքայէլեան փողոց, տուն № 99, դէպի Վանքի մայր-եկեղեցին: Հոգեհանգիստը՝ շաբաթ օր, փետրվարի 17-ին, երեկոյեան ժամը 7-ին:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ պատանջ. Համայնական բանկեր. —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Միշտ մի և նոյն երգը. Նամակ Ներքին-Ախտայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Աբիսինիա և Իտալիա.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազգի պատգամը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՋ

Մի շատ կարևոր գործի սկիզբն է դրված Ռուսաստանում: Կառավարութիւնը փորձել է մոցնել բանւոր դասակարգի համար ապահովութիւն, որով աշխատաւոր, բանւոր մարդիկ իրաւունք են ստանում հիւանդութեան, ձախորդութեան և ծերութեան միջոցին ստանալ յայտնի նպաստ կամ թոշակ:

Ֆինանսների և ներքին գործերի մինիստրները վճռել են ապահովութեան դրամագլուխ կազմելու համար փող չը վերցնել բանւորների ուռճկից, այլ միայն գործարանատէրերից: Դա շատ նպատակայարմար վճիռ է, քանի որ այդպիսով բանւորի օրավարձը չէ ենթարկվում կրճատումների և մնում է բոլորովին ազատ:

Բանւորական դասակարգը սկսում է օրից օր մեծանալ Ռուսաստանի զանազան մասերում և, ի միջի այլոց, Անդրկովկասում: Թիֆլիս, Բաքու, Բաթում քաղաքների գործարաններում կան բազմաթիւ բանւորներ և հազուագիւտ չեն այն դժբաղդ դէպքերը, երբ մշակները հիւանդանում են կամ նոյն իսկ զրկվում են առ միշտ աշխատելու կարողութիւնից, ձեռք կամ ոտք կոտրվելու պատճառով, կամ որ և է հաշմանդամութեան պատճառով: Այդպիսի դէպքում բանւորների ապահովութեան օրինագիծը կարող կը լինէր այդ դժբաղդացածների օրական ապրուստը ապահովել մի որոշ չափով:

Բանւորական ապահովութեան գործը զարմանալի առաջադիմութիւն է արել Գերմանիայում: Անցեալ 1895 թուականին Գերմանիայում հիւանդութեան դէպքերի համար ապահովացրած էին $7^1/_2$ միլիոն բանւորներ, որոնցից $2^3/_4$ միլիոն անձն ստացել են օգնութիւն. դժբաղդութեան դէպքերի համար ապահովացրած էին 18 միլիոն բանւոր, որոնցից 265,000 իրապէս օգնութիւն էին ստանում, և վերջապէս $11^1/_2$ միլիոն բանւոր ապահովացրած էին ծերութեան և անկարութեան դէպքերի համար, իսկ նպաստներից օգտվում էին 300,000 անձն: Այդ բոլոր դէպքերում օգնութիւն մատուցանելու համար գանձված է 300 միլիոն գերմանական մարկ:

Այդպիսի հետևանքների հասել է կառավարութիւնը առանձին հարկ սահմանելով ունևոր դասակարգի վրա: Հետևանքները այնքան մխիթարական են, որ գերմանական հասարակական կարծիքը այժմ որամադիր է աւելի ևս առաջ գնալ այդ ճանապարհով: Երեք շաբաթ սրանից առաջ բավարական մինիստր Ֆելիչ իր ոգևորված ճառախօսութիւնը ամփոփեց հետևեալ խօսքերով. „Բանւորների ապահովութեան օրինագիծը անհրաժեշտութիւն էր, ոչ ոք այլ ևս չի մտածի յետ գնալու մասին. մենք դրանով շատ և շատ մեղմացրինք բանւորական խնդրի սուր արտայայտութիւնները“: Ժողովը, ուր կային ամէն դասակարգի ներկայացուցիչներ, համակրութեամբ լսեց պետական մարդու այդ ձևակերպութիւնը:

Ռուսաստանում նոր չէ յարուցվում բանւորների ապահովութեան խնդիրը: Իսկ այն օրից, երբ գերմանական փորձը տուեց աջող և մխիթարական հետևանքներ, այդ խնդիրը դարձաւ կառավարչական շրջանների լուրջ հոգածութեան առարկայ: Եւ այժմ նա իրականանում է, իբրև սկզբնական փորձ: Անկասկած, այդ գործի հետևանքը կը լինի նոյնքան մխիթարական, ինչքան դա արդէն իրապէս տեղի ունի Գերմանիայում:

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐ

Նորերս Սանկտ-Պետերբուրգի նահանգի կօղուշ-տա գիւղի համայնքը, ինչպէս հաղորդում են լրագրները, որոշել է՝ վաշխառութեան դէմ մաքառելու նպատակով, հիմնել գիւղական համայնական բանկ, վեց հազար ռուբլի հիմնական դրամագլխով, և ֆինանսների մինիստրութիւնը արդէն հաստատել է այդ բանկի կանոնագրութիւնը: Բացի դրանից, այդ նահանգի մի այլ գիւղական համայնք, վաշխառուների ճիրաններից ազատվելու համար, կազմել է մի գիւղական ընկերութիւն, որին մասնակից են 60 տանտէրեր և որի նպատակն է՝ միջոց տալ գիւղական համայնքին թեթև և էժան տոկոսով ու երկար ժամանակով դրամական փոխառութիւններ անել: Այդ ընկերութեան հիմքը դնելու համար կառավարութիւնը պէտք է եօթ հազար ռուբլի սուբսիդիա տայ:

Վաշխառութիւնը մեր երկրի հասարակական այն չարիքներից մէկն է, որոնց դէմ ամենայն ոյժով պէտք է մաքառել, որովհետև այդ չարիքը փորում է ժողովրդական անտեսութեան հիմքը: Ճշմարիտ է, օրէնքը սահմանել է ամենախիստ պատիժներ վաշխառուների համար, ծրագրել է մի շարք միջոցներ այդ չարիքի դէմ մաքառելու համար, բայց և այնպէս նա ոչ միայն արմատախիլ չէ լինում, այլ աւելի և աւելի լայն ծաւալ է ստանում, մանաւանդ գիւղական ազգաբնակութեան մէջ: Եւ այդ շատ հասկանալի է:

Եթէ մեծ քաղաքներում, վաճառականական և արդիւնաբերական կենտրոններում, որտեղ կան բազմաթիւ դրամատներ, բանկեր, փոխադարձ օգնութեան և վարկի հաստատութիւններ ու ընկերութիւններ, վաշխառութիւնը այնու ամենայնիւ իր գործունէութեան համար լայն ասպարէզ է գտնում, ի՞նչպէս կարող է ազատվել նրանից գիւղը, որը զուրկ է այդ տեսակ հաստատութիւններից: Գիւղացուն փող է հարկաւոր պատասխանը: Փող չը կայ... Ով սիրտ ունի, թող նստի, լաց լինի: Ժողովարարութիւն արէք, ասում եմ, ընկերութիւն կազմեցէք, ներկայացում տուէք, ինչ որ ուզում էք արէք, միայն գործեցէք... Լսող չը կայ: Այսինքն լսող կայ, հասկանում են իմ լեզուն. բայց բութ, անզգայ պինդ գէմքեր են մնում, որոնցից մահվան ցրտութիւն է փչում...

—Ասացէք, Աբրահամ, խօսեց տիկինը քիչ մը ամաչելուց յետոյ,—ես կարող եմ օգտակար լինել, հը...

Աբրահամը սկզբում չէր կարողանում հաւատալ թէ տիկինը մի բան կարող է անել: Եւ, ուշադրութիւն չը դարձնելով նրա խօսքերի վրա, տխուր մտքերի տակ ճնչված մարդու բազմանոգութիւնն էր պատկերացնում իր դէմքի վրա: Իսկ տիկինը շարունակեց.

—Կամենում էք, ես ժողովարարութիւն կանեմ... Տուէք ինձ մի թերթ թուղթ, ես անէ տուն ման կը գամ, կը խնդրեմ:

—Իրաւ... բացականչեց երիտասարդը զմայլութեան մէջ գեղեցիկ միտք գտած մարդու ոգևորութեամբ:

—Ի՞նչ կը լինի...

—Գեղեցիկ... Փրկութեան ճանապարհը գտնվում է... Կարելի է ձեր աջակցութեամբ և մի ներկայացում տալ: Դուք եթէ... մասնակցէք...

Նա լռեց, քննում էր թէ ինչ տպաւորութիւն է թողնում այդ առաջարկութիւնը տիկնոջ վրա, և տեսնելով նրա դէմքի հանդիստ, համակրական արտայայտութիւնը, աւելի ոգևորված ասաց.

—Ես մարդ կը ճարեմ, բեմը սարքելը իմ պարտքն է:

—Մինթէ այստեղ բեմ էլ կայ:

—Կը ստեղծենք, դժուարութիւնները ոչինչ են: Ես սովորել եմ, հարկաւոր է շարչարվել...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԳԻ ՊԱՀԱՊԱՆԸ

(Գաւառական հերոսներ)

—

Մահտեսի-Մնացականը ջրից շատ է շարչարվում, ջրից շատ է քրքրվում: Մահտեսի-Մնացականը հանգիստ ու դադար չունի, քունը կարել է, իր միսն է ուտում: Ի՞նչ անէ խեղճը. հարսը կալ կտրածն է, մարդուց ոչ վախում է, ոչ ամաչում է:

Այս էր գաւառական խուլ անկիւնի հասարակական կարծիքը, որ հաստատվել էր մի քանի չարաթվայ ընթացքում: Բախտաւոր էր Մահտեսին, որ այդ կարծիքը չէր լսել: Եթէ լսէր, պիտի ողջողջ հողը մտնէր: Նա այդքան տքնում, չարչարվում էր, սրտին ու լեզուին քար էր դրել, որպէս զի այդպիսի հասարակական կարծիք չը կազմվի: Միամիտ էր, խաբվում էր...

Մի օր, ճաշից յետոյ, եկաւ նոյն երիտասարդը: Մահտեսին բակումն էր և անասելի զարմանքով տեսաւ, թէ ինչպէս նա անամօթի պէս ներս մտաւ, կոտրտվելով երկու-երեք խօսք ասաց: Ինչոն դուրս եկաւ և նրան ներս հրաւիրեց:

—Ձեր տունը, տիկին, մի փոքրիկ ամրոցի է նման, նկատեց երիտասարդը, գլխարկը պատուհանում դնելով:

—Այո... Այստեղ ամենքն են ամրոցներում ապրում, պատասխանեց տիկինը:

—Ե՞րբ պէտք է բաց տների մէջ, բաց սրտով ապրել սովորենք:

—Ե՞րբ... Ես կասեմ ձեզ. լոյս տուէք այսպիսի մի տեղի երեխաներին, որ գտնէ նրանք հասկանան թէ ինչ է աշխարհը:

—Այդ մասին լաւ կը լինէր եթէ չը խօսէինք, տիկին... Ես յուսահատված եմ, և եթէ սկսեմ գանգատ, դուք զարձեալ պիտի ասէք թէ գանգատ հարկաւոր չէ:

—Ճիշդ է, ես այդպէս պիտի ասեմ: Գանգատներից ինչ օգուտ:

—Բայց ինչու՞ էք անուանում գանգատ, քանի որ ես միայն դրութիւնն եմ նկարագրում: Ես չը գիտեմ թէ որն է այն ճանապարհը, որ սիրտս է որոնում. այսինքն, գիտեմ, հասկանում եմ... բայց մի կատարեալ ապուշութիւն այնպէս քարացրել է այստեղի մթնոլորտը, որ պէտք է քարանալ, նրա ծանրութեանը դիմանալու համար: Կարծում եմ, որ պէտք է գտնել մի հրաշալի, կախարդական գործիք, որով կարելի լինի զրտնել, շարժել մարդու մէջ ծածկված այն լարը, որ սրտի ամենամաքուր խորշերն է խօսացնում և մարդուն քիչ, գոնէ երկու մատնաչափ բարձրացնում է ցեխից, ապականութիւնից: Ի՞նչպէս գտնել այդ գործիքը: Որքան աշխատում ես, միայն կեղծ, անպէտք նօտաներն ես հնչեցնում... Բայց հարկաւոր է, անպայման հարկաւոր է, որ մարդը որոնէ կեանք, լոյսի ճառագայթներ...

—Մինթէ այդպէս է:

—Դուք նոր էք հարցնում, անհոգ մարդ... Իսկ ես յոգնել եմ, ես ուժասպառ եմ դառել: Թէև թուլասիրտ չեմ, թէև լացից փախչող եմ, տեսնում եմ թէ ումի և ինչի դէմ պէտք կուռել, բայց կատարեալ անօգնականութիւն... չը գիտեմ ումի ձեռքից բռնեմ, տանեմ այդ պակասութեան դէմ: Ձեռքեր շատ կան, բայց ես չեմ կարողանում բռնել. չինող ձեռքերը և քանդող, ծեծող, ջարդող ձեռքերը մի և նոյն կազմուածքն ունեն, մի և նոյն օրէնքով են շարժվում...

Ինչոն բարձր ձայնով ծիծաղեց:

—Դուք, երևի, ծեծից էլ էք վախում, արտասանեց նա, չարունակելով ծիծաղը...

Բայց այդ ծիծաղը վիրաւորական չէր երիտասարդի համար. նրա մէջ լսվում էր զառնութեան, վշտի ձայնը. դա բորբոքված սրտի կրկիծն էր: Նա իսկոյն վերջացաւ. Ինչոի չքնաղ աչքերը այս անգամ թախիծ էին արտայայտում: Երիտասարդը գտաւ այն համակրութիւնը, որին որոնում էր:

—Շատ ցաւալի է, ճշմարիտ, ասաց տիկինը մի քնքոյշ, վերին աստիճանի սրտառուչ ձայնով:

Մի վայրկեանում այդ խօսքերը ոգևորեցին երիտասարդին: Նա կանգնեց, մի ձեռքով հեռացրեց ճակատի վրա թափված խիտ մազերը և ասաց.

—Միայն ցաւալի... Այդ վարձատրութիւն չէ. դրանով ամայի, չոր դաշտում յոյսի ծաղիկ չի բանի: Երևակայեցէք... Հէնց այսօր ես ճակատս պատին էի խփում մի բան հասկացնելու համար և որպիսի հասարակ, պարզ բան... Տէր Աստուած, մինթէ դու մարդուն մտքի պէս ամենաբարդ մեծագործութիւնների անսպառ աղբիւրն ես չնորհել, որ նա այսպիսի դատարկութիւններով պարապի: Ուսումնարանը դոմի է նման. աղքատ, խեղճ... մարդու լացն է գալիս, երբ տեսնում է խեղճ երեխաներին միմեանց գլխի թափված... Գիրք չունեն, մատիտ չունեն, ոտաբոբիկ են, քաղցած: Ասում եմ պէտք է խղճալ այդ թչուառներին, ասում եմ հարկաւոր է դրանց օգնել, քիչ կարդ, քիչ կանոն. լայնացնենք սենեակը, նստարանների թիւը աւելացնենք, մաքուր օդ տանք անմեղ, կարօտ երեխաներին: Ումին ես ասում... Փող չը կայ, ահա միակ առնողրմ պատասխանը: Փող չը կայ... Ով սիրտ ունի, թող նստի, լաց լինի: Ժողովարարութիւն արէք, ասում եմ, ընկերութիւն կազմեցէք, ներկայացում տուէք, ինչ որ ուզում էք արէք, միայն գործեցէք... Լսող չը կայ: Այսինքն լսող կայ, հասկանում են իմ լեզուն. բայց բութ, անզգայ պինդ գէմքեր են մնում, որոնցից մահվան ցրտութիւն է փչում...

—Ասացէք, Աբրահամ, խօսեց տիկինը քիչ մը ամաչելուց յետոյ,—ես կարող եմ օգտակար լինել, հը...

Աբրահամը սկզբում չէր կարողանում հաւատալ թէ տիկինը մի բան կարող է անել: Եւ, ուշադրութիւն չը դարձնելով նրա խօսքերի վրա, տխուր մտքերի տակ ճնչված մարդու բազմանոգութիւնն էր պատկերացնում իր դէմքի վրա: Իսկ տիկինը շարունակեց.

—Կամենում էք, ես ժողովարարութիւն կանեմ... Տուէք ինձ մի թերթ թուղթ, ես անէ տուն ման կը գամ, կը խնդրեմ:

—Իրաւ... բացականչեց երիտասարդը զմայլութեան մէջ գեղեցիկ միտք գտած մարդու ոգևորութեամբ:

—Ի՞նչ կը լինի...

—Գեղեցիկ... Փրկութեան ճանապարհը գտնվում է... Կարելի է ձեր աջակցութեամբ և մի ներկայացում տալ: Դուք եթէ... մասնակցէք...

Նա լռեց, քննում էր թէ ինչ տպաւորութիւն է թողնում այդ առաջարկութիւնը տիկնոջ վրա, և տեսնելով նրա դէմքի հանդիստ, համակրական արտայայտութիւնը, աւելի ոգևորված ասաց.

—Ես մարդ կը ճարեմ, բեմը սարքելը իմ պարտքն է:

—Մինթէ այստեղ բեմ էլ կայ:

—Կը ստեղծենք, դժուարութիւնները ոչինչ են: Ես սովորել եմ, հարկաւոր է շարչարվել...

կաւոր, մանաւանդ ձմեռը, այս կամ այն անհրաժեշտ, անկետաձգելի ծախքի համար, հարկը, տուրքը վճարելու համար. այդպիսի բսպհներում նա չէ մտածում տոկոսի մասին և հետևանքների, ապագայի մասին, որովհետև նա դիմելու ուրիշ տեղ չունի, ուրիշ ելք չունի: Սահմանեցէք ամենախիստ պատիժներ, ամենասաստիկ հսկողութիւն, այնու ամենայնիւ այդ չարիքը դոյութիւն կունենայ, կաճի, կը զարգանայ, որովհետև ժողովրդի տնտեսական կեանքի մէջ նա անհրաժեշտութիւն է:

Ամեն մի չարիք կարելի է վերացնել միայն անհետացնելով նրա պատճառը. քանի որ դոյութիւն ունի պատճառը, ոչ մի խիստ օրէնք, ոչ մի պատիժ չէ կարող արմատախիլ անել նրան, և եթէ անի էլ, միայն ժամանակաւորապէս, կամ արտաքուստ: Վաշխառութիւնը, ժողովրդական այդ մեծ չարիքը կարելի է վերացնել, ջնջել միայն հայրենասիրութեամբ զիւղական ազգաբնակութեան միջոց և հնարաւորութիւն—թեթև տոկոսով և երկար ժամանակով դրամ փոխ տալով:

Իսկ այդ միջոցը կարող է իրագործվել միայն զիւղական համայնական բանկեր հաստատելով: Տարակոյս չը կայ, որ այդ է միակ արմատական միջոցը արմատախիլ անելու վաշխառութիւնը. ուստի Կօգուլտա զիւղի բանկի հիմնադիրների փորձը արժանի է ամենայն համակրութեան:

Մի քանի զիւղական համայնքներ կարող են միանալ, և սկզբում, նոյն իսկ փոքր դրամագլուխ տալ. կառավարութիւնն ևս կարող է օգնել, քանի որ նա ամենայն համակրութեամբ է վերաբերվում զիւղական բանկեր հիմնելու ծրագրին, և այդպիսով մի քանի կենտրօնական տեղերում կարող են շուտով բացվել մի քանի համայնական բանկեր, որոնք ամենալաւ կուռողները կը լինեն վաշխառութեան դէմ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

IX

Վրաց հոգևորականութեան նշանաւոր ներկայացուցիչներից մէկը, Գաբրիել եպիսկոպոս, որը վախճանվեց այս օրերս, իր ամբողջ կարողութիւնը, մօտ 40 հազար ռուբլի, կտակեց վրաց ազգին, յատկացնելով այդ փողը դպրոցներին, դրադարաններին և այլ և այլ բարեգործական նպատակներին:

Դա մի դեղեցիկ դաս է, որ տուեց յարգելի հովիւը ոչ թէ միայն վրաց հոգևորականութեան, այլ և հայոց հոգևորականութեան, որը, անշուշտ, համարձակութիւն ունի իրան աւելի բարձր, աւելի զարգացած, և աւելի անձնուէր համարելու, քան թէ մեր հարևան վրացիների հոգևորական դասը:

Թող այդպէս լինի: Թող հայոց կուսակրօն հոգևորականութիւնը ինքն իրան սփոփի այն մտքով, որ աւելի բարձր է, քան թէ վրաց հոգևորականութիւնը, բայց և այնպէս նա հարկադրված է օրինակ առնել վրաց Գաբրիել եպիսկոպոսից, որովհետև մենք չենք յիշում և ոչ մի դէպք (եթէ չը հաշուենք Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանի ֆանտաստիկական կտակը) երբ հայ եպիսկոպոսը իր ամբողջ հարստութիւնը կտակէր ազգին, եկեղեցուն, կամ առհասարակ որ և է բարեգործական նպատակով:

Ինչպէս յայտնի է, հայոց կուսակրօն հոգևորականների ամբողջ հարստութիւնը, մեր եկեղեցու կանոններին նայելով, անպատճառ պէտք է անցնի եկեղեցուն, որովհետև եկեղեցին է միակ ժառանգը այդ հոգևորականների: Սակայն մեր բազմաթիւ եպիսկոպոսները ոչ միայն անտես են առնում եկեղեցու այդ արդար պահանջը, այլ նոյն իսկ նրա առաջն առնելու համար, դեռ կենդանութեան ժամանակ, իրանց ամբողջ հարստութիւնը, որ սովորաբար տասնեակ հազարների է հասնում, բաժանում են իրանց ազգականների, իրանց «սիրելիների» մէջ, այնպէս որ այս և այն հարուստ եպիսկոպոսի մահից յետոյ, ուրիշ ոչինչ չէ մնում, բայց եթէ «դատարկ» մնդուվներ, «մաքրաղարդած» սենեակներ:

Մենք չենք խօսում, ի հարկէ, այն դէպքերի մասին, երբ մի որ և է եպիսկոպոս յանկարծամահ է լինում, ինչպէս, օրինակ, Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանի հետ պատահեց, երբ խոլերայից բռնվելով՝ չը կարողացաւ ոչ մի կարգադրութիւն անել, և նրա մօտ 40 հազար ռուբլի հարստութեան մեծ մասը անցաւ Էջմիածնի ձեռքը: Այդ տեսակ դէպքեր բացառութիւնների շարքը պէտք է անցկացնել:

Սովորական, մշտական երևոյթը այն է, որ մեր բարձրաստիճան հոգևորականները, եպիսկոպոսները և արքեպիսկոպոսները, որոնցից շատերը (չենք խօսում այն անշահասէր հոգևորականների մասին, որոնք ապրում են աղքատ և մեռնում են աղքատ), ինչպէս մենք ամենալաւ գիտենք, ունեն՝ մէկը 20 հազար, միւսը 40 հազար, երրորդը 80 հազար, մեռնելով, իրանց ամբողջ կարողութիւնը, որ, ի հարկէ, ստացել են եկեղեցուց և ժողովրդից, բաժանում են և միշտ էլ բաժանել են իրանց ազգականներին, և այնքան տհաս և անզարգացած են, որ նոյն իսկ իրանց փառասիրութեան համար, որ և է հասարակական նպատակի չեն տալիս:

Եւ ահա այդ պատճառով Գաբրիել եպիսկոպոսի կտակը հանդէս է գալիս իբրև մի բացառութիւն ոչ միայն վրաց, այլ նոյն իսկ հայոց հոգևորականութեան մէջ, բացառութիւն, որ կատարեալ իրաւունք է տալիս մեզ ասելու.— «Սրբազան հայրեր, օրինակ առէք և այդ օրինակը երբէք մի մոռացէք»:

Սակայն, դժուար թէ մեր սրբազան հայրերը օրինակ էլ առնեն: Միշտ ապրելով ժողովրդից հեռու, կենդանի մարդկանցից կտրված վանքերում և մենաստաններում, երբէք չը տեսնելով աղքատի արտասուքը, սովատանջի ողբը, հեռու լինելով կենդանի մարդկանց առօրեայ, բազմաթիւ վշտերից և նեղութիւններից, մեր կուսակրօն հոգևորականները, կարծէք, չեն էլ զգում ժողովրդի վիշտը, աղքատի դառն բսպէները, սովեալի հեկեկանքը, և չը զգալով այդ բոլորը, չեն էլ զգում այն բարձր, վեհ, սրբազան զգացմունքը, որ տիրում է մարդուս, երբ նա կարողանում է օգնել մէկին, խնամել միւսին, ձեռք կարկառել ընկածին, բարեգործութիւն անել կարօտեալներին...

Եւ, ով գիտէ, գուցէ դա է պատճառը, որ այն միջոցին, երբ նոյն իսկ մեր ասիական հասարակութեան մէջ անդադար դուրս են գալիս աշխարհական մարդիկ, որոնք այս և այն ձեով բարեգործական կտակներ են անում, կուսակրօն հոգևորականների միջից այդպիսի մարդիկ չեն դուրս գալիս, և այդպիսով մի Գաբրիել եպիսկոպոս մնում է նախանձելի բացառութիւն՝ բոլորի համար...

Խ. Մաղումեան

ՄԻՇՏ ՄԻ ԵՒ ՆՈՅՆ ԵՐԳԸ

I

Էջմիածնի պաշտօնական օրգանը յունվարի համարում մի տեսութիւն է զետեղել անցեալ տարվայ եկեղեցական գործերի մասին: Իրողութիւնը ծաղկեցնելու ճարտասանական արհեստը, բացականչութիւնների, տեղի և անտեղի ցիտատների սկզբունքը, որոնցով զարմացնել է ուզում ամսագրի խմբագրութիւնը, այս անգամ էլ չեն կարողացել հրաչքներ ցոյց տալ. եղածը չեղած համարել, իրողութիւնը այլակերպված տեսնել, այնու ամենայնիւ, անկարելի է: Ընթերցողին հարկաւոր են փաստեր, որոնք հաստատէին, թէ եկեղեցու գործերում տիրում է որոշ ուղղութիւն, որ ձգտում է վերացնել պակասութիւնները, կարգ, կանոն դնել կամայականութիւնների տեղ, դուրս գալ աւանդական խառն ու չփոթ դրութիւնից:

Այդպիսի փաստեր են հարկաւոր: Դրանց փոխարէն «Արարատը» մի և նոյն երգն է կրկնում, միշտ մի և նոյնը, որ արդէն հնացել է և անհետաքրքիր դարձել:

Խօսելով վանական կեանքի «անշարժութեան և ամայութեան» մասին, ամսագիրը ստիպված է կանգ առնել այն իրողութեան առաջ, որ չը կան եկեղեցական արժանաւոր պաշտօնեաներ: Եւ բացականչում է. «Երբ արդեօք Տէրը մշակներ պիտի հանէ իւր հնձի համար»:

35—40 տարի է, խօսում են, վիճում են, պարզում են... Բայց կրօնական ամսագիրը դեռ նոր է Տիրոջ կամքը հարցնում: Հաղար անգամ ասել են, որ այլ ևս չեն վերադառնայ հրաչքների դարերը, որ իրական կեանքը ինքը պիտի դրստէ իր պակասութիւնները: Դրա համար բաւական էր, որ հակացվէին կեանքի պահանջները: Բաւական էր մի ուղիղ հայեցակէտ, այն, որ գործ է հարկաւոր և ոչ թէ հառաչանք: Գործը պիտի լինի կենդանի և ոչ թէ մեռած. իսկ կենդանի կարող է լինել միմիայն մի դէպքում —երբ ժամանակի պահանջների արդար և ուղիղ մտքին է համապատասխանում:

Պաշտօնեաներ չը կան: Եւ որտեղից լինեն: Վերջին տարիներս տգէտ քահանաների լեգէօններ աւելացան մեր մէջ: Ինքը «Արարատն» էլ խոստովանում է, որ այդ երևոյթը մի չարիք է: Չարիք է ոչ միայն դա, կասենք մենք: Մեծ չարիքն այն է, որ այդպիսի խոստովանութիւնն անելուց յետոյ հրապարակ են հրատարվում ամեն տեսակ սոփեստութիւններ՝ երևոյթը քողարկելու, արդարացնելու համար: Արդէն շատ է խօսված այդ սոփեստութիւնների դէմ, բայց հայ կղերականը յուսահատվել չը գիտէ և միշտ մեծ կարծիք ունի իր միանման երգի անվերջ կրկնութիւնների վրա:

«Մեր թեմական դպրոցները դեռ ևս հեռու են զուտ քահանայարաններ լինելուց», ասում է Էջմիածնի օրգանը, իր ընթերցողներին երևի մի անասելի զարմանք պատճառելու համար: Ուրիշ ինչ զգացմունք կարող է յարուցանել Էջմիածնի նոր մանկավարժների այդ գիւտը: Ինքը, Էջմիածինը, հաստատել է թեմական դպրոցների համար կանոնադրութիւններ, մշակել է ուսումնական ծրագիր, որը կրօնական ուսմունք-

---

այնուհետև աջողութիւնը ապահովված է: Մենք կը դնենք փոքրիկ, ծիծաղաշարժ վոդեվիլներ...

—Բայց առանց իմ մասնակութեան էլ կարելի է, ընդհատեց տիկինը ցած ձայնով, ամաչելով:

—Ինչո՞ւ...

Պատասխան չեղաւ: Միայն Նինոն, գուցէ առաջին անգամ իր կեանքում, մի ընկճված, խոնարհ հայեացքով ցոյց տուեց, որ կայ արդեօք: Երիտասարդը հակացաւ, որ արգելքը այդ տունն է, այդ փոքրիկ բերդը:

—Ոչինչ, ասաց նա.—հէնց այստեղից պէտք է սկսել արգելքներ ոտնահարելը: Առանց դրան անհնարին է. իբրաքանչիւր քայլափոխ պէտք է գրաւվի եռանդուն դիմացկանութեամբ: Եւ երբ այդ աջողվի, այն ժամանակ միայն քաղցր կը լինի չարչարանքի պտուղը: Պէտք չէ թուլութիւն, տիկին. դուք ինքներդ ինձանից շատ լաւ գիտէք այս. յիշում էք, ինձ էիք յանդիմանում թուլութեան համար...

—Խօսքը ազդեց: Տիկնոջ վարդագոյն շրթունքների վրա երևաց մի հրաշալի ժպիտ, որ փարատում էր ամեն մի կասկած, երկմտութիւն: Նա ընդունում էր, որ պէտք է անել, նա չէր մերժում: Եւ երիտասարդը, մի ակնթարթում հասկանալով այդ, բացականչեց.

—Դուք կերդէք, տիկին... ես մոռացել էի, որ դուք հիանալի երգում էք:

Նոյն հրաշալի ժպիտը անփոփոխ մնաց տիկնոջ դէմքի վրա: Նա միայն չտապեց բողոքել «հիանալի» խօսքի դէմ: Բայց այդ բողոքը չէր ընդունում Աբրահամը:

—Պէտք է, պէտք է այս քարացած, խաւար ամբոխին հասկացնել, ասաց նա, խիստ չեչտելով իւրաքանչիւր բառը,—պէտք է ցնցել նրա բոլոր ջղերը: Զգացմունք, սիրտ չը կայ մարդկանց մէջ. երգը կարող է դրանց լացացնել, հաւատացէք... չէ՞ որ դեռ երեխաներ են դրանք... կոպիտ, անտաշ երեխաներ...

Խնդիրը վերջացած էր. խօսքը փոխվեց, անցաւ երկուսի հայրենիքին: Նրանք կրկնում էին վաղեմի յիշատակներ, քաղցր ու անմոռանալի անցածի պատմութիւններ: Երիտասարդը կամենում էլ գնալ, բայց Նինոն խնդրեց սպասել թէյի:

—Ամբողջ օրերով մենակ եմ, չը կայ մէկը, որի հետ երկու խօսք փոխանակել կարելի լինի, ասաց տիկինը:

—Ուրախութեամբ ձեր խօսակիցը կը դառնամ, բայց մի պայմանով, տիկին: Ես սիրում եմ հաւատալ, որ դուք համարում էք ինձ ձեր վաղեմի ծանօթներից մէկը...

—Ի՞նչ խօսք...

—Ուստի կարծում եմ, որ չէք բարկանայ ինձ վրա, եթէ ես խնդրեմ, որ մի կտոր երգ երգէք: Այդ ինձ համար մեծ վայելչութիւն կը լինի. ականջներս կոչացել են, երկար ժամանակ չը լսելով իմ այնքան յարգած երգեցողութիւնը, որի հայրենիքը այս արջի անկիւնը չէ: Խնդրեմ չը մերժէք, տիկին:

Նինոն քիչ տարուբերվելուց յետոյ չը կարողացաւ մերժել երիտասարդի անդադար կրկնվող խնդիրքը և փակելով դուռը, շատ ցած, բայց բարակ ու քնքոյշ ձայնով սկսեց երգել: Երիտասարդը լսում էր նրան հիացած. նրա շըրթունքների վրա նստած քաղցր ժպիտը ամենից լաւ ցոյց էր տալիս, թէ ինչ հոգեկան բերկրանք էր տիրել նրան:

Երգը հասաւ Մահտեսի-Մնացականի ականջին հէնց այն բսպէին, երբ նա երկրորդ անգամ կամացուկ մօտեցաւ դրանը, կանգ առաւ, չիմանալով ինչ անել և ապա ականջը դրաւ բանալիի համար թողած ճեղքի վրա: Նա լսեց իր հարսի ձայնը և յետ վազեց, ընկաւ խոհանոցը, դողում էր, քթի տակ մի բան էր փնթփնթում: Խոհանոցում նրա կինը թէյ էր պատրաստում մի աղքատ կնոջ հետ, որին մի-մի կանչում էին, մի կտոր հաց տալով՝ տնային գործեր էին կատարել տալիս:

—Կնիկ, տունդ քանդվի, ինչպէս քանդվել է արդէն, գոչեց Մահտեսին, իր փափախը սաստիկ խփելով գետնին:

Կինը վախեցած վեր թռաւ և համարեա շընչասպառ հարցրեց.

—Ի՞նչ է պատահել... վատ լուր... Միքայ...

—Լռիր, անզգամ... Այսպիսի բան չի լինի, ականջդ մտնում է...

—Ի՞նչ կայ, տնաքանդ, ասա, պատասխանեց կինը լացի եղանակով և ջուխտ ձեռքով սկսեց ծեծել իր ծնկները:

—Օրէնք, հաւատ չը մնաց, բոլորը ոտի տակ տուին, փչացրին... Եւ իրանք էլ կը փչանան, չեն մնայ, այսպիսի աշխարհ չի լինի...

Այդ ժամանակ միայն կինը հասկացաւ, որ իր ամուսնու վրդովմունքը խրթին, վերացական բանից է առաջացել: Ուստի նորից նստեց և իր գործը շարունակեց:

Բայց Մահտեսին նորից գոռաց.

—Բաւական չէր... խայտառակ... չան... մեղայ Աստուծու, բերանս ինչ էր եկել որ ասեմ... տօ, քեզ հետ չեմ:

—Ի՞նչ ես ուզում ինձանից, կծու սառնութեամբ հարցրեց կինը:

Մահտեսին կրակ ընկաւ, տեղից չարժվեց, ձեռքը բարձրացրեց կնոջ գլխի վրա, իջեցնել էր ուզում, բայց այդ ժամանակ տեսաւ օտար կնոջը, որ ականատես է լինում իր տան ներքին գործին: Նա կարող էր խօսք դուրս տանել: Եւ յաղթահարվեց Մահտեսին, լռեց, կանչած դէմքը դարձրեց դէպի այդ կինը և ասաց հանդիստ կերպով.

—Դու գնա...գնա, դրանը սպասիր:

Աղքատ կինը երեսը ծածկեց, պատին քսվելով դուրս գնաց: Մահտեսին խլայն բռնեց իր կնոջ օձիքից. հարկադրելով նրան որ ուղիղ իր դէմքին նայէ, նա ասաց.

—Երեսուն եօթ տարի է որ դու այստեղ, ինձ հետ ես. արել ես այնպիսի բան... Նա երգում է այն թոկից փախած մօտ, որին ոչ ես եմ ճանաչում, ոչ դու... Արել ես այնպիսի բան, ձայն հանել ես...

—Չէ՞, պատասխանեց կինը:

—Դէ լաւ... գնա, գլխիդ ճար արա... ես մարդկանց բերանի խօսք դառնալ չեմ կարող: Գնա, ձայնը կտրել տուր...

—Ո՞ւր գնամ, ինչպէս գնամ, չայ եմ պատրաստում:

—Գնա, ասում եմ քեզ. մնուն եմ պահել... գնա... Տէր Աստուած... Գնա, այնտեղ նստիր նրանց մէջտեղը. ոտդ կոտրվի, տեղիդ չը շարժվես, մինչև որ այն ծովամարդը, այն հրէշը չը կորչի:

—Բայց ես գործի եմ, չէս տեսնում, այ մարդ:

—Շան ծնունդ, դու դեռ ընդդիմանում ես:

Նա ոտով սաստիկ խփեց գետնին և աչքերը այնպէս շուռ տուեց, կարծես ոչնչացնել էր ուզում ընդդիմախօսին: Կինը լռեց, քաշվեց մի անկիւն: Մահտեսին մի բսպէ արձանացաւ այդ դրութեան մէջ, իբրև չանթահարող պատիժ, բայց իսկոյն էլի հասկացաւ, որ կինը իսկապէս զբաղված է. հեշտաեռը եփ էր գալիս, պէտք էր բաժակները լցնել: Նա կակղեց:

—Դու գնա, ասաց նա.—ես այստեղ կանեմ, ինչ որ հարկաւոր է. կանչիր այն կնոջը:

Կինը հեռացաւ, Մահտեսին նստեց նրա տեղը:

(Կը շարունակվի)

նրին առաջին տեղն է տուել բոլոր առարկաների մէջ՝ յատկապէս այն նպատակով, որ եկեղեցական պաշտօնեաներ պատրաստվեն։ Եւ այժմ դուրս է գալիս, որ այդպիսի դպրոցներ հեռու են քահանայարաններ լինելուց։ Եթէ կրօնական ամսագրին տուած լինէր պարզ խօսելու հնարքը և եթէ նրա վարիչների համար պարտադիր լինէր իրանց ցանկութիւններն ու ուղղութիւնը որոշ կերպով արտայայտելը, մենք գուցէ մի քան կը հասկանայինք։ Ինչ են ուզում ասել այն մարդիկ, որոնց վրա դրած է տգէտ քահանաներ բազմացնելու չարիքի պատասխանատուութիւնը, երբ հեռացնում են թեմական դպրոցները հոգևորականութեան շրջանից։ Գուցէ այն, որ այդ դպրոցների ծրագիրը նրանք անբաւարար են համարում կրթված հոգևորական պատրաստելու համար. գուցէ ընդունում են, որ ուսումը այդտեղ չատ սահմանափակ է, չատ է տարրական և, հետևաբար, դեռ պէտք է այդ դպրոցները բարձրացնել, աւելի մեծ և լայն ուսումնական ծրագիր հաստատել, պատրաստել աշակերտների համար որքան կարելի է չատ միջոց զարգանալու, ժամանակակից գիտութեան չատ մօտենալու։

Միամտութիւն կը լինէր այդպիսի ենթադրութիւն անելը։ Երկու-երեք տողից յետոյ գալիս են այսպիսի խօսքեր. «Այս չարիքի (տգէտ հոգևորականութեան) առաջն առնելու համար է, որ մի քանի թեմերում ընծայարաններ են հիմնվել, որ գոնէ ամենակարևոր գիտելիքն են աւանդում տիրացուներին»։ Այժմ արդէն հասկանալի է, թէ ինչպիսի մշակներ են հարկաւոր Տիրոջ հունձի համար։

Նշանակում է, որ տիրացուարանը պիտի կատարել թեմական դպրոցի պաշտօնը։ Թէ ինչ են տիրացուարանները, այդ մասին խօսելու հարկ չը կայ։ Պէտք է միայն զարմանալ, թէ որ ատիճան մթնած են «Արարատի» վարիչների մանկավարժական հասկացողութիւնները։ Աւելի դառն հեգնութիւն այն դպրոցների վրա, ուր մեծ մասամբ բարձրագոյն ուսման տէր մարդիկ են դաս աւանդում, ենթադրել չէ կարելի։ Եւ տեսէք տիրացուարանների դրութիւնն ինչ է, որ նրանց ջատագովներն անգամ ուղղակի ասում են, թէ նրանց «կազմակերպութիւնը դեռ չատ թերի և անբաւարար է»։

Քահանան չը պէտք է լինի իր հօտի զարգացած անդամներից մէկը. նրան հարկաւոր չէ աշխարհական գիտութիւն. նա միայն պիտի լինի մի կրօնամոլ, կաստային շահերին հոգով և մարմնով նուիրված սահմանափակ մարդ, որ բացի շարականից, «հարանց վարք»-ից, դաւանաբանական հատ ու կտոր հասկացողութիւններից ուրիշ մի բանի կարօտ չէ։ Մինչև այժմ կարող էր լինել նոյն իսկ անգրագէտ քահանայ, բայց այսուհետև այդպիսիները չեն պատահի։ Այս է դուրս գալիս ընծայարանի գաղափարից, և այդ էլ դեռ այն դէպքում միայն, եթէ ընծայարանները մի հրաչքով ստանան անթերի և բաւարար կազմակերպութիւն։

Քահանայական հարցի մէջ, ի հարկէ, չէ կարելի լինել այն ատիճան տգէտ, որ քարոզեն թէ հարկաւոր չէ ուսում ստացած քահանան։ Բայց ինչպէս արդարացնել տգէտների ձեռնադրութիւնը, որ տեղի է ունենում ամեն օր։ Մի կողմից կարելի է վարագուրվել ժողովուրդի պահանջներով, միւս կողմից ապագայի համար խոստումներ անել ընծայարանների միջոցով, իսկ թեմական դպրոցները հեռու համարել քահանայացուներ պատրաստելու նպատակից։

Ե՞րբ պէտք է, վերջապէս, հասկանալ, որ մարդկանց առակներով կերակրել չէ կարելի։ Դուք ուզում էք ծածկել մեր հոգևորականութեան անկարողութիւնը։ Զիմացող էք ձեռնում թէ քահանայական ատիճանին հասնելու համար ինչն է հոգևոր հայրերի համար ամենից չատ գնահատելին։ Բայց հաւատացէք որ միայն դուք էք, որ ծածկում էք ձեր գլուխները և կարծում էք թէ ոչ ոք ձեզ չէ տեսնում։

Լ.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՅԻՑ

Փետրվարի 12-ին

Անցեալ յունվարին այստեղ կայացաւ գիւղական հասարակութեան ընդհանուր ժողով՝ Ներքին-Ախտայի հասարակութեան գլխաւոր տանուտէր (общественный старшина) ընտրելու համար։ Շրջակայ 6—7 գիւղերի բոլոր հասարակութիւնները, որ ենթակայ են Ներքին-Ախտայի գիւղական հասարակութեան վարչութեան, աւելի քան 800 ընտրողներ, հաւաքվել էին տեղական պօլիցիայի դուռը։ Սակայն ընտրութեան միջոցին ժողովրդի մէջ կռիւ սկսվեց՝ և կռուի պատճառով ընտրութիւնը բեկանվեց։ Այդ մասին տեղական պօլիցիական բաժնի պրիստավը յայտնել է իր բարձր իշխանութեան ու վերջինս նոյն ընտրութիւնը կայացնելու համար՝ արդէն նշանակել է Նոր-Բայազէտի գաւառապետի աւագ օգնական Ստեփան Ղորղանեանին, որին այս օրերս սպասում է տեղական ժողովուրդը։ Օգնական Ղորղանեան, անկասկած քաջ ծանօթ է ժողովրդական ընտրութեան սիստեմին և այդ տեսակէտից անկասկածելի է, որ նա բուն ընտրողական սկզբունքով կը վարէ հասարակութեան գալավայի ընտրութեան գործը։

Բայց թէ որ ատիճանի բարեխիղճ մարդ կընտրվի մի այդպիսի բազմամարդ հասարակութեան համար, որպիսին է Ներքին-Ախտայի հասարակութիւնը (800 ծուխ 1886 թւի ժողովրդագրութեամբ), այդ մասին չենք կարող գուշակել։ Սակայն կարող ենք ասել, որ հրապարակի վրա եղող բոլոր թեկնածուները ևս, ինչպէս երևում է, անբաւարար են այդ պատասխանատու պաշտօնի համար։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ գիշեր, փետրվարի 16-ին, Ռուսաց գործակալութեան միջոցով, Պետերբուրգից, ստացանք հետեւեալ հեռագիրը. «Փետրվարի 13-ին, Թիֆլիսում, ոմն Պօղոս Յակոբեան մահացու կերպով վիրաւորվեց գինետան մէջ՝ իր երկու ընկերակիցների ձեռքով, որոնք իսկոյն անհետացան։ Ենթադրվում է, որ երեքն էլ Գէորգովի սպանութեան մէջ մասնակցութիւն են ունեցել և նրանք վախենում էին, որ Յակոբեանը կը մատնէ իրանց. որ Գէորգովի, ինչպէս և երկու վաճառականների՝ Աբովեանցի և Մակարովի սպանութեան փորձերը կատարված են յանցաւորների մի խմբի ձեռքով, որը՝ սպանելու սպառնալիքով՝ փող էր պահանջում հարուստ հայերից, Լօնդօնի յեղափոխական կոմիտէի անունից։ Լուրերին նայելով՝ ձերբակալվածներից մէկը, մի Թիւրքահպատակ, կասկածվում է նոյնպէս և Կ. Պոլսի հայոց պատրիարքի կեանքի դէմ սպանութեան փորձ անելու մէջ»։

—

Ֆինլանդիայի Հելսինգֆորս քաղաքում հրատարակվող «Nia Pressen» լրագրի № 44-ում տպագրված է պատօր Աբրահամ Ամիրխանեանի մի յօդուածը, որ ընթերցողների ուշադրութիւնն է դարձնում Փոքր-Ասիայի հայերի թշուառ վիճակի վրա։

—

Ինչպէս յայտնի է, «Моск. Вѣд.» լրագիրը վերջերս յայտնեց, որ նա երբէք ընդդէմ չէ եղել վրացիներին, այլ յարձակվել է միայն հայերի վրա։ Վրաց «Իվերիա» լրագիրը այդ առիթով գրել է մի յօդուած, որի մէջ ասում է հետեւեալը. «Մենք կամենում ենք հաւատալ, որ Մոսկվայի լրագիրը այդ ամենը ասում է անկեղծ և մտածած կերպով, և որ այսուհետև մենք չենք տեսնի նրա էջերի մէջ իր այժմեան ասածի հակառակը։ Մենք մինչև անգամ կարծում ենք, որ այսուհետև Մոսկվայի լրագիրը կը պաշտպանի մեր շահերը, հէնց որ հանգամանքները կը պահանջեն այդ. օրինակ, ինչպէս յայտնի է, մեզանում դեռ չը կան այն հաստատութիւններից շատերը, որոնցից օգտվում է եւրօպական Ռուսաստանը. մենք չունենք ոչ մի բարձրագոյն ուսումնարան, երդուեալների դատարան, զեմստվոյի հաստատութիւններ. հայրենի երկրի ուսուցումը տեղական ուսումնարաններում համապատասխան տեղ չէ բռնում և այլն։ Շատ տեղերում վրաց ազգաբնակութիւնը այնքան խիտ է, որ մի զէսիատին հողի երրորդ մասը երկու երեք հազար ռուբլի է գնահատվում, մինչդեռ Զէրնօմօրեան շրջանում անգամին տարածութիւններ մնում են անմարդաբնակ։ Փոխանակ այդ երկրում բնակեցնելու վրացի գիւղացուն, որ հոգին տալիս է հողի պակասութիւնից, գաղթեցնում, բերում են այնպիսիներին, որոնք չեն դիմանում կլիմային և կոտորվում են։ Ահա այդ բոլոր կարիքների համար վրացիները կարօտ են միջնորդի, և յոյս ունենք, որ այդպիսի միջնորդ կը հանդիսանայ Մոսկվայի լրագիրը և նա չուտով առիթ կունենայ ապացուցանել իր անկեղծութիւնը և բարեկամութիւնը դէպի մեզ՝ վրացիներս»։ Տեսնենք։

—

Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը մի նոր բաժին է աւելացրել իր էջերում «ազգային թերթերէ ծաղկէփունջ» վերնագրով։ Այդտեղ գտնում ենք քաղուածքներ հայ լրագիրներից՝ ժամանակակից զանազան հարցերի վերաբերմամբ։ Մենք կատարելապէս համակրում ենք այդ ձեռնարկութեան։ Առաջին փորձը վատ չէ, և պէտք է յուսալ, որ հետզհետէ աւելի հարուստ կը լինի այդ բաժինը։ Այդ փորձով Վիէննայի ամսագիրը մի քայլ է անում դէպի ընդհանուր գրական հանդէսների դիրքը։ Միմիայն չոր գիտական հետազօտութիւններ տպելով «Հանդէսը» չէ կարող մատչելի դառնալ ընթերցողների աւելի մեծ շրջաններին։ Զուտ մանագիտական, հետևաբար և միայն «ընտրեալների» մի նեղ շրջանին հասկանալի օրգան չէ կարող ժողովրդականութիւն ստանալ մանաւանդ մեր մէջ, ուր «Հանդէսի» բռնած ուղղութեան համար պատրաստված դասակարգը չատ աննշան է։ Բնական է, ուրեմն, սպասել, որ ամսագրի մէջ տեղ բռնեն և առօրեայ կեանքի երեւոյթները։

—

Ճանապարհորդ Միկլաշէվսկի, որը չատ անգամ գնացել է Պարսկաստան և Թիւրքիա, այդ երկրների առևտրի և արդիւնաբերական այժերի հետ ծանօթանալու նպատակով, նորերս Պետերբուրգում, Ազատ-Տնտեսական ընկերութեան մէջ մի զեկուցում կարդաց այդ առարկայի մասին։ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, Միկլաշէվսկի մանրամասնօրէն նկարագրելով Թիւրքաց Հայաստանի բնական հարստութիւնները, վերջաբանութեան մէջ նկատեց, թէ չը նայելով այդ հարստութիւններին, Թիւրքաց Հայաստանը մնանկ վիճակի մէջ է գլխաւորապէս քիւրդերի հարեւանութեան, Թիւրքաց վարչութեան ծայրայեղ կաշառակերութեան, Թիւրքաց ֆինանսական անկարգ կազմակերպութեան պատճառով և այլն։ Քրիստոնեաները Թիւրքաց Հայաստանում արդիւնաբերողներ են, իսկ մահմեդականները միայն սպառողներ։ Մեր առևտրական յարաբերութիւնները Թիւրքաց Հայաստանի հետ մինչև այժմ բաւական թոյլ և չնչին էին իրանց հետևանքով։

—

Թիֆլիսի վաճառական Ալէքսանդր Արամակիսեանը, որ վախճանվեց ամսիս 15-ին, կտակել է բարեգործական նպատակով հետեւեալ գումարները.—Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան 500 ր., Էջմիածնին՝ 500 ր., քահանաների գանձարանին 300 ր., Գայեանեան դպրոցին 200 ր.։ Բացի դրանից, իր երկու անշարժ կալուածքը թողել իր քրոջ ձեռքին մինչև նրա մահը, որից յետոյ նոյնպէս պէտք է յատկացվի բարեգործական նպատակի,—եկամուտի տօկոսով պէտք է պահվեն որդեգիրներ։ Կտակատարներ նշանակված են Մ. Հասան-Ջալալեան և Յ. Քամոյեան։

—

Մենք ստացանք Պարիզում հրատարակված մի փոքր բրոշիւր «La justice dans la vie» (Արդարութիւնը կեանքի մէջ) վերնագրով։ Հեղինակն է Նիկողայոս Լալաեանց, որը յայտնում է, թէ այդ բրոշիւրը թարգմանել է իր գրած հայերէն ընդարձակ։ Ինչպէս երևում է, այդ աշխատութիւնը ընդարձակ է լինելու, որովհետև հեղինակը հրատարակել է առաջին մասը միայն «Ընդհանուր խորհրդածութիւններ» վերնագրով։

—

Կիրակի, փետրվարի 18-ին, աղնուականների թատրոնում տրվելու է մի դրամատիկական երաժշտական երեկոյթ, հայերէն լեզուով։ Ի միջի այլոց խաղին պէտք է մասնակցի մի նոր դերասան՝ պ. Օհանեան, որ ուսել է Պետերբուրգում։

—

ԴԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Մեր թատերասէրների մէջ միտք է ծագել՝ մի դրամատիկական ընկերութիւն կազմելու։ Այդ միտքը սկսում է առաջ գնալ և արդէն մշակվում է ծրագիր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեզ գրում են Կ. Պոլսից, յունվարի 30-ից. «Իզմիրլեան պատրիարք այս շաբթու Անգլիոյ բոլոր եպիսկոպոսներուն ղրկեց շրջաբերական տեղեկագիր մը, ուր ամփոփ կերպով և մանրամասնութեամբ նկարագրուած են Հայաստանի մէջ տեղի ունեցած իսլամացումները, որոնց մասին անչուշտ հեռագիրը ձեզ հաղորդած է։ Հետզհետէ ուրիշ օրինակներ ալ կը պատրաստուին, ղրկուելու համար Ամերիկայի, Իտալիոյ, Սպանիոյ և ուրիշ քրիստոնեայ աշխարհներու եպիսկոպոսներուն»։

—

Փետրվարի 3-ից մեզ գրում են Կ. Պոլսից. «Տպագրական տեսչութիւնը Բ. Դուռը կանչելով հայ թերթերուն տնօրէնները պատուիրեց հրատարակել պաշտօնական զեկուցումները,—որ մի քանի ժամանակէ ի վեր դադարել էին տպագրել,—հակառակ պարագային սպառնալով թերթերին չնջել։ Տպագրական տեսուչը աւելցուց, որ «Լոյս» և «Մանդուամէ» հայերէն թերթ ըլլալով, կը հրատարակեն Դրան կողմէ հաղորդուած տեղեկութիւններ, հետևաբար ձեր ընթացքը գուշակել կուտայ թէ դուք համամիտ էք կառավարութեան թշնամիներուն։ Երկու օրէ ի վեր «Արեւելք» ու «Ճերիտէ»,—«Հայրենիք» տակաւին դադարուած կը մնայ,—սկսած են առաջուան պէս հրատարակել պաշտօնական զեկուցումները»։

—

«Times» լրագիրը իր առաջնորդող յօդուածներից մէկում քննելով բալգարական անցքերը, ասում է, որ Անգլիայում պէտք է համակրութեամբ վերաբերվեն պրինց Ֆերդինանդին, որովհետև նրա հաշտութիւնը Ռուսաստանի հետ Եւրոպայի հանգստութեան և խաղաղութեան մի նոր գրաւական է։

«Ի հարկէ,—աւելացնում է «Times» լրագիրը,—ներկայումս Թիւրքիայի և Ռուսաստանի մէջ գոյութիւն ունեցող բարեկամական յարաբերութիւնները և մտերմութիւնը չեն կարող դիպլոմատիական յաղթութիւն չը համարվել, և այդ յաղթութիւնը տարել է Ռուսաստանը Թիւրքիայում Անգլիայի հակառակ։ Անկասկած է, որ ռուս թիւրքական բարեկամութեան առաջին պայմանը պէտք է լինի պաշտպանել օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը և, ի հարկէ, որովհետև Ռուսաստանը պարտաւոր է այդ պայմանը պահպանել, այդ պատճառով էլ նրա միջամտութիւնը հայերի օգտին անհնարին է դառնում։»

—

Կ. Պոլսից «Standard» լրագրին հեռագրում են. «Հայկական գործը, մինչև իսկ արեւելեան ամբողջ հարցը պետութիւնների փոխադարձ լուռ համաձայնութեամբ յանձնված է Ռուսաստանի հոգատարութեան։ Կ. Պոլսում տարածվում է այն կարծիքը, որ պետութիւնների մէջ եղած խուլ, բայց զօրեղ հակառակութեան պատճառով՝ Եւրոպայի միահամուռ միջամտութիւն հայերին պաշտպանելու համար երբէք չի կայանայ. ուստի անհրաժեշտ է մի միջազգային դաշնագրով ձեռնարկել, թէ ինչ լիազօրութիւններ են տրվում Ռուսաստանին, որ սա պաշտպանէ հայերին Թիւրքաց հարստահարութիւններից»։

—

Արդայլեան դուքսը նորից հրաւէր է կարդում ժողովարարութիւն անելու Փոքր-Ասիայի կարօտեալների համար, որովհետև մինչև ապրիլ ամիսը, երբ գարունը կը բացվի, հարկաւոր է, պաշտօնական հաղորդագրութեան նայելով, մօտ կէս միլիոն ռուբլու նպաստ։ Ժողովրդին նպաստ բաժանելու գործը գտնվում է հիւպատոսների հսկողութեան տակ։

—

Լիօն քաղաքում հրատարակվող կրօնական «Les Missions Catholiques» պատկերազարդ շաբաթաթերթի մէջ տպագրվում են յունվարից սկսած Փոքր-Ասիայում գտնվող կաթոլիկ միսիոնարների զեկուցագրերը՝ անկարգութիւնների և կոտորածների մասին։

—

Կ. Պոլսի եւրոպական դեսպանները ճշդել են Հայաստանում կատարված վերջին անկարգութիւնների զոհերի թիւը։ Բ. Դրանը ներկայացրած հաշուից երևում է, որ կոտորվել են 24,655 հայ և 79 թիւրք, իսկ վիրաւորված են 1,255 հայ, և 2 մահմեդական։

—

«Temps» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է յունվարի 23-ից. «Էրզրումի արքեպիսկոպոս Շիշմանեանը Ստամբուլի «Միջերկրական» հիւրանոցումն է գտնվում այժմ։ Նա պէտք է ուղարկվի

Երուսաղէմ։ Թիւրքաց տեղեկութիւններին նայելով, նա մի հակաթիւրքական նամակ է գրել լորդ Սալսբիւրիին։ Նրա հետ տեսնվեցին միայն «Daily News» և «Daily Graphic» լրագիրների թղթակիցները՝ երկու վկաների ներկայութեամբ»։

ԱԲԻՍԻՆԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

II

Այդ օրից Իտալիան սկսեց ցոյց տալ յայտնապէս իր տիրապետական ձգտումները։ Իկապէս ոչ Ասաբը, ոչ Մասսօվան մի առանձին նշանակութիւն չեն ներկայացնում իտալացիների համար, որովհետև թէ Ասաբը և թէ Մասսօվան աւազոտ անապատներ են, զուրկ բուսականութիւնից և կատարեալ դժոխք են ներկայացնում։ Ցունվարին, տարվայ ամենացուրտ ամսին, ջերմաչափը ցոյց է տալիս +25⁰, իսկ յունիսին, մինչև անգամ գիշերը 48⁰-ից ցած չէ իջնում։

Սակայն ռազմագիտական տեսակէտից Մասսօվան մեծ կարևորութիւն է ներկայացնում, որովհետև առաջին՝ նա դէպի Աբիսինիան տանող դուռն է. երկրորդ՝ ծովին ամենամօտ և մատչելի կէտն է։ Հաստատվելով Մասսօվայում, իտալացիները իրանց աչքերը տնկեցին Աբիսինիայի վրա. նրանց միակ ցանկութիւնն էր հաստատել իրանց հովանաւորութիւնը այդ գեղեցիկ երկրի վրա և օրքան կարելի է աւելի մօտենալ նրան։ Այդ նպատակով նրանք զանազան չհասկէր առևտրական առաջարկութիւններ էին անում թէ աբիսինիական առանձին ցեղերի «բասներին»—իշխաններին և թէ Աբիսինիայի թագաւորին, նէգուսին, բայց սրանք միշտ կասկածանքով էին վերաբերվում։

Բայց ահա, 1889 թվին, Յովհաննէս նէգուսը սպանվեց մահդիականների ձեռքով և Իտալիայի դաշնակից, Շոան տիրապետող Մէնէլիքը, իտալական զօրքի օգնութեամբ, գրաւեց Աբիսինիայի գահը։ Շուտով Մէնէլիքի խորհրդական Բաս Մակոնէնը եկաւ Հռոմ, մեծ պատիվով ընդունվեց և վերադարձաւ Աբիսինիա մեծ ընծաներով նէգուսի համար։ Այդ բոլորի հետևանքը այն եղաւ, որ Իտալիայի և Աբիսինիայի մէջ կապվեց մի դաշնագիր, որ կոչվում է «Ուչչեալեան», և որի հիման վրա, Իտալիան յայտարարեց եւրօպական պետութիւններին, թէ Աբիսինիան պաշտօնապէս ընդունել է Իտալիայի հովանաւորութիւնը։

Սակայն անցաւ մի ժամանակ, և Մէնէլիքը պաշտօնապէս յայտնեց, թէ ինքը որ և է այդպիսի դաշնագրութիւն չէ ստորագրել և իտալական որ և է հովանաւորութիւն չէ ընդունել, այլ կապել է Իտալիայի հետ միայն մի բարեկամական դաշնագիր, որի մէջ ասված է, թէ Մէնէլիքը կարող է օտար պետութիւնների հետ ունեցած իր յարաբերութիւնները Իտալիայի միջոցով կատարել, բայց Կրիսպին խաբէութեամբ «կարող է» բառը փոխել է «պէտք է» բառի, օգուտ քաղելով Մէնէլիքի իտալական լեզուի հետ ծանօթ չը լինելուց։

Իտալական կառավարութեան բոլոր ջանքը—մի կերպ քնացնել այդ գործը և ընդունել տալ Մէնէլիքին Ուչչեալի դաշնագիրը, ապարդիւն անցաւ. նէգուսը մերժեց ճանաչել այդ դաշնագիրը և պատրաստվեց պատերազմ սկսել։ Իտալացիները, որոնք սխալ կարծիք ունէին Մէնէլիքի զօրութեան մասին, Ամբա-Ալաջի տեղում մեծ ջարդ կերան, և իտալական մի ամբողջ զօրախումբը ջնջվեց աբիսինցիների ձեռքով, և այդ ժամանակ միայն իտալական կառավարութիւնը հասկացաւ, թէ Աբիսինիան մի զօրեղ թշնամի է, որին նուաճելու համար անպիտան զոհեր են պէտք։

Այժմ իտալացիները չը գիտեն ինչ անեն,—նահանջել՝ այդ թոյլ չէ տալիս ազգային ինքնասիրութիւնը. շարունակել պատերազմը—կը նշանակէ բոլորովին ջլատել Իտալիան, որը առանց դրան էլ հեծում է ծանր տուրքերի տակ։

Թէ ինչով կը վերջանայ Աբիսինիայի հետ ունեցած պատերազմը, դժուար է գուշակել. մի բան անկասկած է, որ այդ պատերազմը, ինչ և լինի նրա հետևանքը, մեծ վնասներ է տալու Իտալիայի տնտեսական և ֆինանսական հարստութեան։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 փետրվարի։ Թագաւոր կայսրը և թագուհի կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորօվնա այցելեցին Միխայլօվեան արտիլէրիական ակադեմիան և դպրոցը, ուր եկաւ նոյնպէս Օդոստափառ գեներալ—ֆելդցեյխմէյստեր Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևվիչ։

ՊԱՐԻԶ, 14 փետրվարի։ Ֆօր շաբաթ օր ճանապարհ է ընկնում Նիցցա՝ մինիստր նախագահի, ծովային և առևտրի մինիստրների ուղեկցութեամբ։

ՀՌՈՄ, 14 փետրվարի։ Լրագիրների հաղորդած տեղեկութիւնների համեմատ, նախկին զինուորական մինիստր գեներալ Պելլու յանձն է առնում իտալական զօրքերի գլխաւոր հրամանատարութիւնը Աֆրիկայում։ Բարատիէրի և Դէյչ գեներալները հրամանատար կը լինեն աֆրիկական զօրաբաժնի երկու դիվիզիաների։

ՊԱՐԻԶ, 15 փետրվարի։ Աւստրիական կայսրը այցելեց Նիցցայում կօբուրգեան իշխանուհուն։

ԲԵՐԼԻՆ, 15 փետրվարի։ «Kölnische Zeitung» հաղորդում է, որ Բաս դիտաւորութիւն ունի ապստամբեցնել Դէլագօրայի տեղացիներին և սիսկել Պորտուգալիային ծախել Անգլիային Դէլագօեան ծովածոցը։

ՎԻԵՆՆԱ, 15 փետրվարի։ «Polit. Corresp». լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, որ այնտեղի դիպլոմատիական շրջաններում չեն հերքում, որ Բ. Դուռը կարող է հարց յարուցանել, որ անգլիացիները հեռանան Եգիպտոսից, սակայն ոչ թէ Ռուսաստանի ազդեցութեան չնորհով, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ թիւրքաց զեկավարող շրջանները շատ դժգոհ են անաջող փորձերից՝ դադարեցնել երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան ագիտացիան, որի կենտրօնը գլխաւորապէս Եգիպտոսն է։

ՎԻԵՆՆԱ, 15 փետրվարի։ «Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, որ Կրիտէ կղզու վրա ապստամբվեց Էսլինոս թեմի ազգաբնակութիւնը։

Իշխան Ֆէրդինանդը պատրաստվում է դարձնը այցելել սերբական թագաւորին։

ՄԻԼԱՆ, 15 փետրվարի։ Նէապոլից այսօր Աֆրիկա է ուղարկված 12,000 զինուորներից բաղկացած մի զօրք։

Կ. ՊՕԼԻՍ, 15 փետրվարի։ Նէլիդօվ բերեց յաստիսեայ երկու վաղաներ մի մեար բարձրութեամբ, մի և նոյն ժամանակ յանձնեց թագաւոր կայսրի նամակը։

Կ. ՊՕԼԻՍ, 15 փետրվարի։ Տրապիզօնի վիլայէտում ձնակոյտը քանդեց մի գիւղ։ 100 մարդիկ սպանվեցին. բազմաթիւ են վիրաւորվածները։

ԼՕՆԴՕՆ, 15 փետրվարի։ Զէմսօն ներկայացաւ Բաֆտարիսի դատարանին՝ մեղադրվելով պատերազմական գործողութիւններ սկսելու համար բարեկամ պետութեան դէմ։ Կարճ քննութիւնից յետոյ դատաւորը յետաձգեց գործի քննութիւնը երկու շաբաթով։ Բոլոր մեղադրվողները, իւրաքանչիւրի համար 2000 ֆունտ գրաւական ներկայացնելով, ազատ են թողված։ Հասարակութիւնը, որի շարքում գտնվում էին մի քանի պէրեր և նշանաւոր անձինք, ողջունեց մեղադրվողներին խրախուսական բացականչութիւններով։

ԼՕՆԴՕՆ, 15 փետրվարի։ «Times» լրագրի Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնների համեմատ, սուլթանի յայտնած ցանկութեանը՝ կանոնաւորել Եգիպտոսի գրութիւնը, մարկիզ Սալսբիւրի պատասխանեց, որ այդ առիթով թիւրքաց դեսպանի արած առաջարկութիւնները չափազանց անորոշ բնաւորութիւն ունեն։ Այն ժամանակ սուլթանը յանձնարարեց մեծ վիզիրին, արտաքին գործերի մինիստրին և պետական խորհրդի նախագահին մշակել որոշ առաջարկութիւններ։

ԼՕՆԴՕՆ, 15 փետրվարի։ Դատարանի նախագահը Զէմսօնի գործի առիթով պատասխանեց հասարակութիւնը մեղադրվողին օվացիաներ անելու համար և սպառնաց հեռացնել դահլիճից։

«Daily News» ասում է, որ եգիպտական կառավարութեան կրէդիտօրները դէմ են անգլիացիների Եգիպտոսից հեռանալուն։

ՀՕՆԿՕՆԳ, 15 փետրվարի։ Այստեղ կրկին երևաց ժանտախտը։ Էպիդէմիան զօրեղ է։

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԲԱԹՈՒՄ. Գէորգօվ. Դուք ուղարկել էք 3 բուբլի և խնդրում էք «Մշակ» ուղարկել։ Սակայն հասցէն այնքան անգրագէտ կերպով է գրած, որ անկարելի է կարդալ։ Շտապեցէք գրել ձեր որոշ հասցէն։

ԳԻՒԼԱԳԱՐԱԿ. Հայոց դպրոցին. Ձեզ «Մշակ» կուղարկվի։ Եթէ որ և է նուիրող լինի՝ կը լրացնենք մնացած 8 բուբլին, եթէ ոչ՝ դուք պէտք է ուղարկէք էլի 8 բուբլի, բացի արդէն ուղարկած 2 բուբլուց։ Ուրիշ պայման մենք չենք ընդունում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Կիրակի, փետրվարի 18-ին
Ա. ՎՐՈՑՐԸ
Մասնակցութեամբ տ. Զարուհու, Ս.-Պետերբուրգից նորեկ դերասան Օհանեանի և դերասանական խմբի անդամների կը տայ։
Դրամատիքական-երաժշտական երեկոյթ

I

ԴՕՆ-ԳՐԻԳՕՐԻՕ

Կատակերգ. 3 արար. թարգմ. Թուրեանի

II

ԿՈՒԱՊԱՏՃԱՌԸ ԵՍ ԷԻ

Կատակ. 1 արար. հեղ. Տէր-Գրիգորեանի

III

«ԽԵԼԱԳԱՐԸ» կերգէ Օհանեանը
Սկիզբը երեկոյեան 8 ժամին է
1—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՅԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍՅԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՅԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.
Ա. Գ. ԴՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մզի, խեղի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Մամուլի տակից դուրս եկաւ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ՈՒԽՏԻ
(չարունակութիւն և վերջ. հատոր գ.)
„ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ“
ՍԱՀԱԿ ԳԷ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(№ 16) 4—5

Ներկայ փետրվարի 5-ից բացվում է
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ
ՁՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ
Չքաւոր աղջիկների համար
(Կրուզենշտերնսկայա փողոց, № 7)
Սօֆիա Խաչատուրեան ԴԷՄԵՆՏԻԵՎԱ
(№ 15) 5—5

«ԵԱՍԼԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ
Ընդունվում են սուբ-վարակիչ հիւանդութիւններով (կարմրուկով, ծաղիկով, քութէչով, դիֆտէրիտով) հիւանդացած երեխաներ։ Ծծկեր երեխաները կարող են ընդունվել իրանց մայրերի կամ դայակների հետ։ Ընդունելութիւնը ամեն օր։ Բժշկութիւնը և խնամատարութիւնը ձրի է։ Հասցէն Վէրա, Ծղնէսովի փողոց, տուն Խալեապինի։ (№ 9) 6—10

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ
Մ. Գ. ՀԵՋՈՒԲԵԱՆԻ
(Գօլովինսկի պրօսպեկտ, տուն Անանովի, Նոր Թատրոնի դէմ)
ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ առաւօտեան 9 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան։
Բժշկում է ատամները, պլոմբ է անում և գնում է արհեստական ատամներ։
(№ 133) 24—30

ՏԻԿԻՆ Շ. ԵՒԱՆԳՈՒԼԵԱՆՑ
որ աւարտել է Պետերբուրգում կար ու ձևի արհեստը և ունի դիպլոմ՝
ՏԱԼԻՍ Է ԴԱՍԵՐ
մասչելի գնով Գլոդզինսկի և Ֆրանսիական մեթոդով, թէ՛ իր տանը և թէ տներում։
Ցանկացողները թող դիմեն Էժանագին գրադարան, Վելիամինովսկայա փողոց։ (№ 12) 6—6

ԹԻՖԼԻԶԻ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԸ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԸ
սրանով պատիւ ունեն յայտնելու ի գիտութիւն հանրութեան, որ ըստ իրանց փոխադարձ համաձայնութեան, ներկայ տարվայ մարտի 1-ից սկսած՝ յիշեալ Առևտրական բանկի Բաղուի, Երևանի և Բաթումի բաժիններում տեղի կունենայ ընդունելութիւն ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈՎ ՈՐՈՇՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ, որոնք հասնելու են կալուածական բանկին նրա տեղացի պարտապաններից։ (№ 19) 2—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ
Հոգաբարձական խորհրդարանում փետրվար ամսի 21-ին 1896 ամի, երեկոյեան 8 ժամին, լինելու է ամուրդ (առանց կրկնածրդի) կապալով տալու մոմավաճառութիւնը հայոց եկեղեցիների և ժողովրդի համար։ Պայմանագրութիւնը կարելի է կարդալ հոգաբարձական դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը։ (Ե. շ.) (№ 18) 2—2

1895 թ. նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ պատրաստած
ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՕԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ
որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով, և տուած առատ բերքով, „ԷԿՕՆՕՄԻԴԷՍ“ ֆիրմայից։
Ցանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շերամապահութեան կայարանում՝ քննելուց յետոյ։
Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑՆԵՐԻՆ, իսկ ՆՈԽԻ՝ Աղա Մուսայ Մահմեդովին։
Այս հասցէով Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ БАКУ.
(№ 138) (Ե. շ.) 24—24

ԲԵՌՏԷՏ ԵՒ ԸՆԿ.
ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՕԺՕԺԻ ՍԵՐՄԸ
Բաղդադի սպիտակ բօժօժից, Սարդինիայի և Ֆրանսիական դեղին բօժօժից։
Առևտրական տունը, որ գոյութիւն ունի 1868 թվից՝ պատիւ ունի յայտնելու շերամապահներին և ցանկացողներին, որ պայմանի և գնի մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑՆԵՐԻՆ հետեւեալ հասցէով.—
БАТУМЪ, Бр. Мнацаканянцъ. (№ 1) (Ն.) 7—8

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Февраля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.